ՀՀ Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնքի ղեկավար Միհեր Մովսիսյանի 2011թ. առաջին կիսամյակում կատարած աշխատանքի մասին հաշվետվություն

գ.Մալիշկա 10.08.2011թ

2011թ. հունվար հուլիս ամիսներին Մալիշկա համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները….

1. Հունվար ամսին հաստատվել է համայնքի 2011թ բյուջեն, կատարվել է համայնքի բնակչության, անասունների հաշվառում:
2. Փետրվար ամսին վերսկսվել են դեռևս 2010թ կիսատ մնացած համայնքի խմելու ջրի ներքին ցանցի շինարարությունը, համայնքի սպորտ դահլիչի վերանորոգման աշխատանքները, որոնք շարունակվում են մինչ օրս և վերահսկվում են համայնքի ղեկավարի կողմից; Կրթության նախարարության «Նախադպրոցական կրթության որակ» ծրագրի մեջ է թիվ 1 մանկապարտեզի վերանորոգումը:
3. Սիստեմատիկ գյուղի տարածքում կատարվել է աղբահանություն և համայնքի տարածքով անցնող ճանապարհների հատվածում կատարվել է աղբի հավաքում և տեղափոխում:
4. Համայնքի փողոցներում կատարվել է փողոցների գրունտի լիցք, բարեկարգվել է շուրջ 20կմ ճանապարհ:
5. Համայնքի մշակույթի տանը պարբերաբար կազմակերպվում են համերգներ համայնքի պարի խմբի և համայնքի շնորհալի երեխաների մասնակցությամբ:
6. Նշվել են հիշատակի և տոնական օրերը, մարտի 8 – ի կապակցությամբ այցելություն է կատարվել դպրոցներ, մանկապարտեզներ, բուժկետ, մնայիսի 9 – ին ճաշկերույթ է տրվել հայրենական մեծ պատերազմի և արցախյան պատերազմի վետերանների պատվին:
7. Կիսամյակի ընթացքում գյուղապետի մոտ ընդունելության են մասնակցել համայնքի շուրջ 350 քաղաքացիներ, որոնց բարձրացած հարցերը դրական լուծում են ստացել:
8. Ցանկապատվել և բարեկարգվել է համայնքի հին գերեզմանատունը:
9. Համայնքի անապահով ընտանիքներին գյուղապետի կողմից տրամադրվել է օգնություն:
10. Վերանորոգվել «Ջանի» ջրագծի մոտ 1կմ հատված, ասֆալտապատվել է գյուղապետարանի հարակից հրապարակը և փողոցը:
11. Գյուղապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում են գյուղի 2 մանկապարտեզները և մշակույթի տանը գործող պարի, նկաչության, շախմատի, ըմբշտամարտի, բոքսի և ֆուտբոլի խմբերին:

Գյոողապետ՝ Մ. Մ Ո Վ Ս Ի Ս Յ Ա Ն